«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Դերային խաղի զարգացման առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Նունե Կարապետյան

Մանկապարտեզ՝ «Անուլիկ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2
ԳԼՈՒԽ 1: ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ: ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ
1.1 ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ.....3
1.2 ԽԱՂԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....4
1.3 ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ.....4
1.4 ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ.....6
1.5 ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ.....7
ԳԼՈՒԽ 2: ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ
2.1 ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ.....8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....11
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Խաղը կայծ է, որ հարցասիրության
և հետաքրքրասիրության կրակ է վառում»
Վ. Ա. Սուխոմլինսկի

Դեռ անցյալ դարի կեսերին Կ. Ուշինսկին խաղի նշանակության մասին արտահայտեց այնպիսի մտքեր, որոնք չեն կորցրել իրենց արժեքը մինչ այսօր: Նա գտնում էր, որ խաղը թույլ է տալիս տեսնելու, ճանաչելու երեխաների հոգին, այն նպաստում է նրանց դաստիարակությանն ու զարգացմանը: Խաղի մեջ երեխան փորձում է իր ուժերը, դառնում ինքնուրույն, նա վերարտադրում է այն, ինչը տեսնում է շրջապատում: Ուշինսկին խաղը դիտում է որպես երևակայության դրսևորման միջոց:

Նախադպրոցական տարիքում գործունեության առաջատար տեսակը խաղն է: Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություն է առաջացնում: Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը: Խաղը թույլ է տալիս ծանոթանալ մեծերի գործունեությանն ու փոխհարաբերություններին, ապա առաջացող իրական փոխհարաբերությունները նրան սովորեցնում են ճիշտ վարք դրսևորել խաղի պրոցեսում առաջացող իրադրություններում :

Խաղի միջոցով երեխան սկսում է ճանաչել աշխարհը, իսկ մեծահասակները՝ երեխային: Իմ հետազոտական աշխատանքի մեջ ես փորձել եմ ճանաչել երեխային իր խաղային գործունեության մեջ: Կարևորելով խաղի դերը երեխայի կյանքում ՝ հետազոտական աշխատանքի շրջանակներում նպատակ եմ ունեցել ճանաչել երեխային՝ հատկապես նորեկ սաներին, նրանց հարմարեցումը մանկապարտեզում ճիշտ կազմակերպելու, ինչպես նաև նրանց համար դրական միջավայր ստեղծելու համար:

Իմ աշխատանքում ուսումնասիրել եմ դերային խաղերը, նրանց նշանակությունը, զարգացման փուլերը, կազմակերպման և ղեկավարման ձևերը, ինչպես նաև ներկայացրել դերային խաղ-պարապմունքի իմ տարբերակը:

Հետազոտական աշխատանքը սկսելուց առաջ ուսումնասիրել եմ Է. Ալեքսանդրյանի, Լ. Սմբատյանի, Ա. Վ. Պետրովսկու և այլ մանկավարժների աշխատությունները, կազմել եմ

խաղի կազմակերպման պլան, որի հիման վրա անցկացրել եմ գործնական պարապմունք մանկապարտեզի միջին խմբում։

ԳԼՈՒԽ 1
ԽԱՂԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿՅԱՆՔՈՒՄ: ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂԵՐ

1. 1 խաղի դերն ու նշանակությունը նախադպրոցականի կյանքում

Ն. Կրուպսկայան, խոսելով խաղի դերի մասին, գտնում է, որ խաղը ունի բացառիկ նշանակություն, քանի որ այն և՛ ուսում է, և՛ աշխատանք, և՛ դաստիարակության լուրջ միջոց: Կրուպսկայան նշում է, որ ընդօրինակող ինքնուրույն խաղը օգնում է երեխաներին յուրացնել ստացած տպավորությունները, խորացնում է գիտելիքները: Կրուպսկայան, Ուիշինսկին և Մակարենկոն խաղը դիտում են որպես երեխաների ինքնուրույն ստեղծագործական գործունեություն: Խաղերը չպետք է շաբլոնացվեն, այլ պետք է ապահովեն երեխայի ձեռներեցությունը, ազատությունը, որ նա ինքը հնարի խաղեր, իր առջև դնի նպատակներ: Մեծահասակները չպետք է սահմանափակեն երեխաների մտահղացումները: Մակարենկոն, շատ բարձր գնահատելով խաղի դաստիարակչական նշանակությունը, խոսում է այն մասին, որ խաղը երեխայի կյանքում կարևոր է և ունի այն իմաստը, ինչը որ մեծահասակի համար գործունեությունը, աշխատանքը: Նա գտնում է, որ ինչպես երեխան իրեն կդրսևորի խաղում, այնպես էլ նա իրեն ցույց կտա աշխատանքի մեջ, երբ մեծանա: Այստեղից արվում է այն եզրակացությունը, որ «ապագա գործչի դաստիարակությունը տեղի է ունենում նախ և առաջ խաղում»:

Խաղի էական, կարևոր նշանակությունն այն է, որ երեխան կանգնում է ուրիշ մարդու դիրքերի վրա, նայելով աշխարհին մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է: Խաղը նպաստում է երեխաների բազմակողմանի մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակությանը:

1.2 Խաղի առանձնահատկությունները

Երեխաների խաղը աչքի է ընկնում որոշակի առանձնահատկություններով։ Նրանցից հիմնականը այն է, որ խաղը երեխաների կողմից շրջապատող կյանքի՝ մեծերի գործողությունների, նրանց փոխհարաբերությունների արտացոլումն է, ընդ որում, այնպիսի պայմաններում, որոնք ստեղծվում են երեխաների երևակայությամբ։ Օրինակ՝ խմբասենյակը կարող է դառնալ անտառ, խանութ, հիվանդանոց ևն.։

Խաղի առանձնահատկություններից է նաև այն, որ երեխան հավատում է իր հորինված խաղի բովանդակությանը։ Օրինակ՝ նա վարում է մեքենան, վիրահատում է հիվանդին ևն.։

Հաջորդ առանձնահատկությունը խաղի ինքնագործ բնույթն է։ Երեխաները իրենք են ստեղծում խաղերը, որտեղ դրսևորվում են նրանց գիտելիքները կյանքի երևույթների և իրադրությունների մասին, ինչպես նաև երեխաների վերաբերմունքը նրանց նկատմամբ։

Կարևոր առանձնահատկություն է այն, որ խաղային գործունեությունը, կերպարը և խոսքը հանդես են գալիս միասնական։ Երեխան խաղում է անմիջական և անկեղծ։ Նա ապրում է իր հերոսի գործողություններով և հույզերով։

Հաջորդ առանձնահատկությունը խոսքային շփումն է։ Երեխաները արտահայտում են իրենց մտքերը, ապրումները, հաղորդակցվում են միմյանց հետ, ճշտում և լրացնում խաղի բովանդակությունը։

1.3 Դերային խաղեր

Խաղերը իրենց բովանդակությամբ և բնորոշ առանձնահատկություններով տարբերվում են։ Խաղերի տեսակներից են.

1. Սյուժետադերային խաղերը, որոնք երեխաները իրենք են ստեղծում դաստիարակի որոշ ղեկավարությամբ։ Այս խաղերը ստեղծագործական, սյուժետադերային խաղեր են, քանի որ այստեղ երեխաները ոչ միայն ընդօրինակում և վերարտադրում են այս կամ այն երևույթը, այլ ստեղծագործաբար գիտակցում այն և վերարտադրում խաղային գործողություններում։
2. Կանոններով խաղեր։ Այս խաղերը երեխաների համար ստեղծում են մեծերը և ունեն որոշակի կանոններ։ Այս խաղերից են դիդակտիկ խաղերը, շարժախաղերը և խաղ-զվարճալիքները։

Մեծերի հետ համատեղ կյանքով ապրելու երեխաների ձգտումը միայն համատեղ աշխատանք կատարելու հիման վրա բավարարվել չի կարող։ Այդ պահանջմունքները երեխան բավարարում է խաղի ընթացքում և իր վրա է վերցնում մեծահասակի դերը, այսինքն, դերային խաղ է խաղում, որը մեծահասակի կյանքին հաղորդակից լինելու յուրահատուկ ձև է։ Օրինակ, երբ երեխան գնորդի դեր է կատարում, սկսում է հասկանալ, որ իրավունք ունի ուշադրությամբ զննելու ապրանքը, նկատողություն անելու սպասարկման վերաբերյալ, բայց խանութից հեռանալիս պարտավոր է վճարել գնված ապրանքի համար։ Երեխան սովորում է կարգապահ լինել, համաձայնեցնել իր գործողությունները մյուս անդամների հետ, այսինքն, խաղի միջոցով ձևավորվում է երեխայի ինքնագիտակցությունը։

Խաղի ընթացքում երեխան հեշտությամբ հասկանում է, որ իրական առարկան կարող է փոխարինել խաղալիքով կամ պատահական իրով։ Այսպես օրինակ սովորական

մատիտը կարող է կրակել, քարը կարող է դառնալ որևէ կենդանի, տերևը՝ թղթադրամ ևն.։ Դերային խաղը նպաստում է խոսքի զարգացմանը, քանի որ այն պահանջում է հաղորդակցության մեջ մտնել ընկերների և մեծահասակների հետ։

Խաղը լուրջ ազդեցություն է ունենում երևակայության զարգացման գործում։ Դերային խաղը ծնվում է երեխայի հետաքրքրություններից, դերային խաղերում երեխան ազատ է, միտքը ճկուն է, որովհետև բացակայում են երեխային կաշկանդող թելադրանքն ու հսկողությունը։

Դերային խաղերը հիմնականում կոլեկտիվ խաղեր են, այստեղ մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը։ Այս խաղերը կրում են ընդօրինակող բնույթ, օրինակ երեխաները ընդօրինակում են դաստիարակին, մայրիկին, հարևանին, վաճառողին և իրենց շրջապատող մեծահասակներին։

Խաղի զարգացման հարցում մեծ դեր են կատարում խաղալիքները, որոնք արտահայտման անհրաժեշտ միջոցներ են։ Նրանց առկայությունը հարստացնում և խորացնում է խաղի բովանդակությունը։ Խաղի ժամանակ բացահայտվում են յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները՝ հետաքրքրությունները, բնավորության դրական հատկությունները, այսինքն այս խաղերը շատ լավ միջոց են ճանաչելու երեխաների ներքին աշխարհը։

1.4 Դերային խաղի զարգացման փուլերը

Դերային խաղը նախադպրոցական տարիքում անցնում է մի շարք փուլերով: Այդ փուլերը իր հեազոտություններում ներկայացրել է Նովոսյոլովան:

1. **Ճանաչողական փուլ**(կյանքի առաջին տարին) : Երեխան ճանաչում է առարկան խաղային գործունեության ընթացքում: Նա յուրացնում է առարկայի խաղային նշանակությունը, գործողության ձևերը(քնել, ուտել) և կարող է կատարել առանձին գործողություններ: Այս տարիքի երեխաներին բնորոշ է միևնույն գործողությունների բազմակի կրկնությունը:
2. **Արտացոլման փուլ**(կյանքի երկրորդ տարին): Երեխան անցում է կատարում առանձին գործողություններից դեպի պրակտիկ, իմաստավորված դերային գործողություններ: Իր գործողությունները նա մեկ առարկայից տեղափոխում է մյուսին: Այսինքն՝ քնեցնում է ոչ միայն տիկնիկին, այլև արջուկին, փիսիկին: Առաջին անգամ տեղի է ունենում մեկ առարկայի փոխարինումը մյուսով՝ փայտիկը դառնում է գդալ:
3. **Սցենարի վերարտադրման փուլ**(կյանքի երրորդ տարին): Երեխաները սկսում են գործել որոշակի անձի անունից: Սակայն, իր վրա վերցնելով որոշակի դեր, երեխան չի հայտնում դրա մասին, նրա գործողությունները դառնում են ավելի տրամաբանական, նա ակտիվորեն օգտագործում առարկա-փոխարինիչները:
4. **Սյուժետադերային խաղի փուլ**(3-4 տարեկան): Երեխաները սկսում են անցում կատարել գործողության արդյունքի ցուցադրումից դեպի գործողության միջոցների ցուցադրման:

5. **Սեփական դորային խաղերի փուլ**(կյանքի չորրորդ տարին)։ Երեխան սկսում է անվանել իր դերը՝ «ես մայրիկ եմ», «ես վարորդ եմ»։ Այս փուլում երեխաները արդեն խաղում են համատեղ և փոխգործակցելով, նրանք կարողանում են պայմանավորվել, դերաբաժանում անել։
6. **Սցենարի համատեղ մշակմամբ խաղերի փուլ**(5 տարեկան)։ Երեխաները կարողանում են կառուցել գործողությունների հաջորդականությունը, վերարտադրում են ոչ միայն մարդկային հարաբերությունները, այլև սոցիալական վարքի կանոնները։ Երեխաները ակտիվորեն օգտագործում են մասնագիտական բառապաշարը, զարգանում է երևակայությունը, խաղերն ավելի բազմայուժետ և երկարատև են դառնում։

1.5 Դերային խաղի ղեկավարումը

Խաղերի այս տեսակի ղեկավարումը պահանջում է մեծ վարպետություն և մանկավարժական տակտ։ Դաստիարակի հիմնական դերը կազմակերպչական է։ Դաստիարակը ուղղություն է տալիս խաղին, չխանգարելով նա պահում է խաղի ինքնուրույն և ստեղծագործական բնույթը, միջամտում է միայն այն դեպքում, երբ խաղը ոչ ցանկալի ուղղությամբ է գնում։ Դաստիարակը նախօրոք չի կարող գուշակել, թե երեխաները ինչ կհորինեն և ինչպես կպահեն իրենց խաղի ժամանակ, բայց դա չի նշանակում, որ դաստիարակը այստեղ ավելի պակաս ուշադիր պետք է լինի, քան մյուս խաղերի ժամանակ։ Դաստիարակը պետք է վստահություն ձեռք բերի երեխաների մոտ, որպեսզի նրանք պատմեն իրենց պլանների մասին, օգնություն կամ խորհուրդ հարցնեն դաստիարակից։ Ղեկավարումը չպետք է հարկադրող լինի, վիրավորող, երեխաների մոտ խաղից դուրս գալու ցանկություն առաջացնի, իսկ միջամտությունը, խորհուրդները, հուշող հարցերը պետք է տեղին լինեն։ Խաղը ավելի արդյունավետ է, երբ նրան մասնակից է դառնում դաստիարակը։ Իր կողմից կատարվող դերի միջոցով նա ներազդում է խաղի բովանդակության զարգացմանը, օգնում է ամաչկոտ, անվստահ երեխաներին խաղի մեջ ընդգրկվելու։ Ղեկավարման կարևոր տարրերից է և այն, որ ավարտից հետո դաստիարակը երեխաների հետ քննարկում է խաղը՝ նշելով նրանց դրական փոխհարաբերությունները, միասնական գործողությունները, որը նպաստում է հետաքրքրության առաջացմանը հետագա խաղերի նկատմամբ։ Անցկացված խաղի վերլուծությունը օգնում է

դաստիարակին գնահատել նրա դաստիարակչական ազդեցությունը երեխաների վրա, վեր հանել խաղերի հետագա ղեկավարման միջոցները։

ԳԼՈՒԽ 2
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2.1 Դերային խաղ կրտսեր երկրորդ խմբում

Թեման՝ Մեր նոր ընկերը

Տեսակը՝ Դերային խաղ

Նպատակը՝ ամրապնդել գիտելիքները մասնագիտությունների մասին, զարգացնել երեխաների հաղորդակցման ունակությունները, դաստիարակել միմյանց հետ շփվելու, երկխոսության մեջ մտնելու, համագործակցելու կարողություն, ընկերոջն ապրումակցելու , նրան օգնելու պատրաստակամություն։

Անհրաժեշտ պարագաները՝ տիկնիկ, սպասք, խոհանոցային հավաքածու, կառուցողական նյութեր, շինարարական գործիքներ։

Պարապմունքի ընթացք

Խթանման փուլ։ Դաստիարակը ողջունում է երեխաներին և ասում.

-Երեխանե՛ր, դուք լացի ձայն չե՞ք լսում, կարծես ինչ-որ մեկը արտասվում է,- մոտենում և եղևնու տակից դուրս է հանում փոքրիկ տիկնիկին,- կարծես տիկնիկն է լաց լինում, եկեք ծանոթանանք նրա հետ և հարցնենք ի՞նչ է պատահել։

Երեխաները հարցնում են անունը, բայց տիկնիկն ասում է, որ մոռացել է իր անունը, որովհետև վաղուց նրա հետ չեն խաղացել։

-Ի՞նչ անենք երեխաներ, ի՞նչ անուն տանք տիկնիկին։

Երեխաներից յուրաքանչյուրը իր տարբերակն է առաջարկում, տիկնիկը ընտրում է Մանեի տարբերակը, որովհետև Մանեն ևս նորեկ է և գրկում է Մանեին։

-Դու ինձ հետ կընկերանա՞ս,- հարցնում է տիկնիկը...իսկ դու՞ք երեխաներ(գրկախառնվում է բոլորի հետ)։

Ծանոթանալուց հետո տիկնիկը պատմում է, որ այսօր իր ծննդյան օրն է, և ոչ ոք չի հիշում այդ մասին, այդ պատճառով է նա տխուր։

-Երեխանե՛ր, ինչպե՞ս օգնենք տիկնիկին։

Միասին որոշում են տորթ և նվերներ պատրաստել։ Տղաները առաջարկում են տիկնիկի համար տուն կառուցել։ Դաստիարակը առաջարկում է բարի խոսքեր ասել։ Երեխաներ սիրով հաճոյախոսություններ են ասում տիկնիկին և վերհիշում իրենց իմացած բարի արտահայտությունները։

<u>Ընթացքը։</u>

Դերաբաժանում անելու համար դաստիարակը առաջարկում է հանելուկներ։

1. Ի՞նչ ենք դնում սեղանին տարեդարձի տեներին։

   Համով, հոտով, դուրեկան, վրան մոմեր տոնական։

<u>Հարցեր։</u> Ո՞վ է պատրաստում տորթեր, ի՞նչ պարագաներ են հարկավոր, որտե՞ղ ենք թխում։

2. Քարը քարին է շարում, ամուր տուն է կառուցում։

<u>Հարցեր։</u> Ինչո՞վ է կառուցում, ի՞նչ գործիքներ ունի շինարարը, ի՞նչ սենյակներ պետք է լինեն տան մեջ։

Այնուհետև ըստ երեխաների ցանկության դերաբաժանում է կատարվում, խաղային կենտրոնից երեխաները իրենց ընտրությամբ վերցնում են անհրաժեշտ խաղալիքները և անցնում գործի։ Դաստիարակը հետևում է երեխաների խաղին և հարցերով ուղղորդում նրանց։

<u>Հարցեր։</u> Ինչո՞վ եք զարդարելու տորթը, քանի՞ մոմ եք դնելու, ինչպե՞ս անել, որ տունը ամուր լինի, քանի՞ հարկ ունի ձեր տունը ևն.։

Խաղի ավարտին դաստիարակը ասում է.

-Եթե տորթը պատրաստ է, եկեք արագ սեղան պատրաստենք և հրավիրենք տիկնիկին։

Երեխաները հավաքվում են սեղանի շուրջ, մաղթանքներ ասում տիկնիկին, իրենց պատրաստած նվերները ցույց տալիս և վերջում գեղեցիկ շուրջպար են պարում միասին։ Տիկնիկը շնորհակալություն է հայտնում և խոստանում, որ կմնա իր նոր ընկերների հետ։
-Երեխանե՛ր, ձեզ դուր եկա՞վ խաղը։
Միասին քննարկում ենք խաղը։

Պարապմունքին ներկա էին տնօրենը և մեթոդիստը։ Վերջիններիս կարծիքը մեջբերված է ստորև.
«Դաստիարակը իր ռացիոնալ մեթոդների և հնարների միջոցով հասավ իր առջև դրված նպատակին։ Պարապմունքն ինքնին դերային խաղ էր, որի կարևորությունը նախադպրոցական տարիքում շատ մեծ է։ Դերաբաժանումը կատարված էր հաշվի առնելով երեխաների կարծիքները։ Հիմնական ուշադրությունը նորեկ երեխայի վրա էր։ Այս պարապմունքի նպատակն էր նպաստել երեխայի հարմարվողականության զարգացմանը, միջավայրում արագ կողմնորոշվելու, փոխօգնության, փոխըմբռնման, փոխզիջման և ընկերասիրության զարգացմանը, կառուցողական ունակությունների ձեռքբերմանը, ինչպես նաև մասնագիտական որոշում կայացնելու ունակությունների ձևավորմանը։ Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ պարապմունքը հաջողված էր։»

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, իմ հետազոտական աշխատանքի ընթացքում, ես բացահայտեցի իմ նորեկ սանին, պարզեցի, որ տանը շատ խաղալիքներ ունի, բայց չի խաղում, որովհետև խաղընկեր չունի: Նա դերային խաղեր չէր խաղացել, այդ պատճառով սկզբում շատ պասիվ էր, բայց խաղի ընթացքում արդեն իմ ուղղորդմամբ ակտիվացավ և վերջում ցանկություն հայտնեց կրկին խաղալու: Կարևոր էր, որ Մանեն զգաց վստահություն, ապահովություն, ընկերական ջերմ տրամադրվածություն:

Կարծում եմ, որ դեռ շատ աշխատանքեր ունեմ անելու իմ առջև դրված նպատակին հասնելու համար և այս խաղ-պարապմունքը իր կարևոր դերն ունեցավ այդ ճանապարհին, որովհետև կարողացա ստեղծել շատ ջերմ, հարգալից մթնոլորտ, իսկ երեխաները դրսևորեցին իրենց կարողունակությունները կառուցողական և ճանաչողական իմացությունների առումով: Հայտնաբերեցի, որ խաղում երեխաները դրսևորում են իրենց ապրումները, մտահոգությունները: Օրինակ Էրիկը տան փոխարեն հիվանդանոց էր կառուցել, քանի որ իր պապիկը հիվանդանոցում է:

Կուզեի, որ դաստիարակները ուշադրություն դարձնեին երեխաների պահվածքին, խաղի ընթացքում նրա գործողություններին, որովհետև խաղի ընթացքում երեխան ավելի անկեղծ է և անմիջական:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Միտոյան, «Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր»
2. Ա. Վ. Պետրովսկի «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», 60-65 էջեր։
3. Է. Ալեքսանդրյան «Նախադպրոցական մանկավարժություն», 2-րդ մաս, 3-34 էջեր ։
4. Լ. Սմբատյան «Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում», 7-41 էջեր։
5. https://studme.org/232622/pedagogika